

**Հաստատված է**

**Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի  
գիտական խորհրդի 2017թ. հուլիսի 08-ի թիվ 25 նիստում**

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. Առաքելյան**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺՆԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Գիտակազմակերպական բաժինը (այսուհետ՝ բաժին) Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ ԻՄ-ի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Բաժինը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

**II. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

4. Բաժնի խնդիրներն են.

4.1. ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների գիտահետազոտական աշխատանքների համակարգումը և դրանց առնչվող ընթացակարգերի մշակումը,

4.2. Տեղական և միջազգային նշանակության գիտաժողովների ծրագրման և համակարգման աշխատանքների աջակցության ցուցաբերումը,

4.3. ԵՊՀ ԻՄ գիտահետազոտական և ուսումնագիտական ստորաբաժանումների աշխատանքային պլանների և ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպումը և կատարման վերահսկումը,

4.4. ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներին գիտական ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

4.5. Դրամաշնորհային ծրագրերով գիտական նախագծերի ձևակերպման և ներկայացման աջակցության ցուցաբերումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը,

4.6. ԵՊՀ ԻՄ աշխատողների գիտական աշխատանքների վերաբերյալ նյութերի էլեկտրոնային հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը,

4.7. ԵՊՀ ԻՄ-ում առկա գիտական սարքավորումների գույքագրումը

4.8. Բաժնի գործունեությունից բխող այլ խնդիրների իրականացումը:

### III. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Բաժնի կառավարումն իրականացնում է բաժնի պետը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը:

6. Բաժնի պետը՝

6.1. կազմակերպում և վերահսկում է բաժնի գործունեությունը, ապահովում է բաժնի հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

6.2. համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս բաժնի աշխատողներին,

6.3. սահմանված կարգով տնօրինում է բաժնի ֆինանսական միջոցները,

6.4. ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը,

6.5. ներկայացնում է բաժինը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, բաժնի անունից հանդես է գալիս այլ կազմակերպություններում,

6.6. պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

6.7. լուծում է բաժնի կանոնադրությունից բխող և բաժնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

#### **IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

7. Բաժնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

8. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ-ի գլխական խորհրդի կողմից՝ ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

**Հաստատված է**

**Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի  
գիտական խորհրդի 2017թ. հուլիսի 08-ի թիվ 25 նիստում**

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. Առաքելյան**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺՆԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Գիտակազմակերպական բաժինը (այսուհետ՝ բաժին) Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ ԻՄ-ի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Բաժինը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

**II. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

4. Բաժնի խնդիրներն են.

4.1. ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների գիտահետազոտական աշխատանքների համակարգումը և դրանց առնչվող ընթացակարգերի մշակումը,

4.2. Տեղական և միջազգային նշանակության գիտաժողովների ծրագրման և համակարգման աշխատանքների աջակցության ցուցաբերումը,

4.3. ԵՊՀ ԻՄ գիտահետազոտական և ուսումնագիտական ստորաբաժանումների աշխատանքային պլանների և ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպումը և կատարման վերահսկումը,

4.4. ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներին գիտական ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

4.5. Դրամաշնորհային ծրագրերով գիտական նախագծերի ձևակերպման և ներկայացման աջակցության ցուցաբերումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը,

4.6. ԵՊՀ ԻՄ աշխատողների գիտական աշխատանքների վերաբերյալ նյութերի էլեկտրոնային հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը,

4.7. ԵՊՀ ԻՄ-ում առկա գիտական սարքավորումների գույքագրումը

4.8. Բաժնի գործունեությունից բխող այլ խնդիրների իրականացումը:

### III. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Բաժնի կառավարումն իրականացնում է բաժնի պետը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը:

6. Բաժնի պետը՝

6.1. կազմակերպում և վերահսկում է բաժնի գործունեությունը, ապահովում է բաժնի հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

6.2. համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս բաժնի աշխատողներին,

6.3. սահմանված կարգով տնօրինում է բաժնի ֆինանսական միջոցները,

6.4. ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը,

6.5. ներկայացնում է բաժինը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, բաժնի անունից հանդես է գալիս այլ կազմակերպություններում,

6.6. պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

6.7. լուծում է բաժնի կանոնադրությունից բխող և բաժնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

#### **IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

7. Բաժնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

8. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ-ի գլխական խորհրդի կողմից՝ ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: